1/3 Փավստոս Բուզանդի
0010, ք.Երևան, ՀՀ
Հեռ.., Ֆաքս՝ +37410 560 000
+37410 529 868
E-mail: info@radiohay.am

HAI FM 105,5

ՄԻՇՏ ԼԱՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
No 07
"04" մարտի 2013թ.

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի աշխատակազմի
ծրագրերի մոնիտորինգի վերահսկողության
վարչության պետ պարոն Հ. Ավետիսյանին

Հարգելի պարոն Ավետիսյան

Ի պատասխան Ձեր 25.02.13թ. No 04-73 գրությանը, ներկայացնում ենք "ՖՄ-105.5" ռադիոկայանի երաժշտական եթերում ս/թ. մարտի 02-ին, ժամը 8:40, 11:40, 12:40, 13:20, 15:20, 16:40, 17:40, 18:40, 19:20, 20:20 հեռարձակված Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզարշավի հայտարարության տեքստը և ձայնագրությունը:

Ինչպես նաև մեր կողմից՝ ռադիոընկերությունը Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ապահովում է ոչ խտրական պայմաններ,

- տրամադրված վճարովի եթերաժամի սակագինը համապատասխանում է օրենքի պահանջներին,
- նախընտրական քարոզչության ընթացքում սակագնի փոփոխություն չի լինելու,
- ընկերության կողմից տրամադրվող եթերաժամանակը և դրա հեռարձակման ժամը համապատասխանում է ոչ խտրական սկզբունքին,
- որևէ մասնակցող Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ներկայացրած նյութի հեռարձակելը չի մերժվել,
- ընկերությունը լրատվական թողարկումներում և հասարակական-քաղաքական հաղորդումներում Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանումը գնահատականներից զերծ և անկողմնակալ է, ինչպես նաև պահպանված է լուսաբանման հավասարության և ոչ խտրական սկզբունքը,
- ընկերության կողմից հավասար հնարավորություն է ընձեռնված Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքներին ընկերության հեռարձակած հաղորդումներին և հաղորդաշարին մասնակցելու համար,

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՄՏԻՑ № 217
«04» 03 2013 թ.

1/3 Փավստոս Բուզանդի
0010, ք.Երևան, ՀՀ
Հեռ.., Ֆաքս՝ +37410 560 000
+37410 529 868
E-mail: info@radiohay.am

ՄԻՇՏ ԼԱՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

- ընկերության լրագրողները, ինչպես նաև եթերում հանդես եկող ընկերության աշխատակիցները անկողմնակալ են Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների հաղորդումներում և հաղորդաշարներում:

Նաև հայտնում ենք Ձեզ, որ համաձայն մեր գնացուցակի, սկսած 2012թ. սեպտեմբերի 01-ից մինչև 2013թ. փետրվարի 28-ը, գովազդի մեկ րոպեի սակագինը, օրվա յուրաքանչյուր ժամի համար կազմում է 3120 ՀՀ դրամ ներառյալ ավելացված արժեքի հարկ:

Հայտարարության տեքստը - մեկ թերթ,
Էլեկտրոնային կրիչ - մեկ հատ:

"ՖՄ-105.5" ՍՊԸ-ի
Տնօրեն

Անահիտ Թարխանյան